ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **25/01/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Ալոյանը, Նարինե Գրիգորյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արարատ Գրիգորյան, Արմեն Դավթյան,Նարեկ Մարտիրոսյան, Աղվան Հարությունյան, Վարդան Ավագյան, Աշոտ Հարությունյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին
25.01.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 2021 թվականի հունվա 25-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը.

1) ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2)ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3)ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4)ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5)ԵՐԿՈՒ ԼՐԱԿԱԶՄ ՇԱՐԺԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարաումանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 5-րդ կետի և « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2021թվականի բյուջեն.

ա/ եկամուտների գծով – 442570,9 հազար ՀՀ դրամ
բ/ ծախսային գծով - 442570,9 հազար ՀՀ դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը / պակասուրդը/ հատված 4
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հատված 5
7.Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6
8.Սահմանել,որ
ա/ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները
բ/ ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները հոդվածների միջև չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ն/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն Հավելված 1 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ա/

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

1. Փոփոխել և հաստատել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Լսեցին
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և ,,Համայնքային ծառայության մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով .

1. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ դիմել ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

2. Համայնքի ավագանու 25.01.2021թ. թիվ 4-Ա որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5-Ա/

Լսեցին
ԵՐԿՈՒ ԼՐԱԿԱԶՄ ՇԱՐԺԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի և 612-րդ հոդվածի 1-ին կետի և ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Տալ համաձայնություն 2020թ. հունիսի 2-ին Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից թիվ ՆՏ-20-04 նվիրատվության պայմանագրով նվիրատվություն ստացված թվով 2 լրակազմ՝ յուրաքանչյուրը 0,7 հա տարածքի՝ շարժական էլեկտրական՝ մեկ հատի արժեքը 1.199.112 (մեկ միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար մեկ հարյուր տասներկու) ՀՀ դրամ գնահատված արժեքով ցանկապատները անհատույց և 5 տարի ժամկետով տրամադրելու Հովհաննես Սավուխի Խանամիրյանին և Արամ Աշոտի Կոստանյանին:

2. Հովհաննես Սավուխի Խանամիրյանի և Արամ Աշոտի Կոստանյանի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի

վճարումները կատարվում են Հովհաննես Սավուխի Խանամիրյանի և Արամ Աշոտի Կոստանյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱՇ ԱՅՎԱԶՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՎԱԼՈՌՅԱ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Անժելա Սարգսյան ----------